ՈՐՈՇՈՒՄ
մասնագետ նշանակելու մասին

18.03.2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Բաբայանս, քննարկելով վարույթիս թիվ 90152117 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի և <<ԱրմԱէրո>> ՓԲ ընկերության միջև 26.01.2016թ-ին կնքված ԲԸԱՀԾՁԲ-4-3 պայմանագրով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար համապատասխանաբար՝ 17.035.481 ՀՀ դրամ և 13.859.488 ՀՀ դրամ գումարով, ձեռք են բերվել B-46-6 տեսակի Л02АР133 համարի և УТД-20 տեսակի Л01АР141 համարի շարժիչներ: Մինչև այդ շարժիչները ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչության ԱՏ և ԶՏ ծառայությունների կենտրոնական բազա /ՀՀ ՊՆ 84029 զորամաս/ մատակարարելը, դրանք <<Զարենցավանի հաստոցաշինական գործարան>> /ՀՀԳ/ ԲԲ ընկերությունում անցել են ստենդային փորձարկումներ, և 06.05.2016թ-ի N 46 ստենդային փորձարկումների ակտի հիման վրա արձանագրվել է, որ B-46-6 տեսակի Л02АР133 համարի շարժիչը համապատասխանում է այդ շարժիչների շահագործման համար անհրաժեշտ ցուցանիշներին, որոնց հիման վրա էլ մատակարարված շարժիչները մուտքագրվել են ՀՀ ՊՆ 84029 զորամաս:

Այնուհետև, նշված շարժիչները համապատասխան տեխնիկաների վրա տեղադրելու նպատակով մատակարարվել են ՀՀ ՊՆ 60925 զորամաս և տեղադրվել Т-72-А տեսակի Х12АТ2336 գործարանային համարի N 916 տանկի ու БМП-БРМ-1К տեսակի В06РТ6735 գործարանային համարի N940 մարտական հետախուզության մեքենայի վրա, սակայն սահմանված 500 մ/ժամ շահագործվելու փոխարեն՝ շահագործվելով համապատասխանաբար՝ 60.7 մ/ժամ և 285 մ/ժամ, տեխնիկական վիճակի վերաբերյալ 21.10.2016թ-ի N 21 և 19.12.2016թ-ի N 29 կազմված ակտերի հիման վրա պարզվել են, որ դրանք չեն համապատասխանում շահագործման համար անհրաժեշտ ցուցանիշներին, որի պատճառով արգելվել է դրանց հետագա շահագործումը:

ՀՀ ՊՆ 60925 զորամասի հաշվեկշռում գտնվող վերոնշյալ տեխնիկաների հետագա շահագործումն ապահովելու նպատակով, 11.01.2017թ-ից մինչև 24.01.2017թ-ը ընկած ժամանակահատվածում, կենտրոնական բազայից հատկացվել են ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի և <<ԱրմԱէրո>> ՓԲԸ-ի միջև 26.04.2016թ-ին կնքված ԲԸԱՀԾՁԲ-4-23, ինչպես նաև ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ի և <<Սելեվերտա>> ՍՊԸ-ի միջև 23.09.2016թ-ին կնքված ԲԸԱՀԾՁԲ-4-23 պայմանագրերով ՀՀ ՊՆ կարիքների համար 16.829.816 ՀՀ դրամով մատակարարված B-84 տեսակի Л02АР166 համարի և 13.523.440 ՀՀ դրամով մատակարարված УТД-20 տեսակի Ц07ИТ3295 համարի շարժիչները, որոնք մինչ մատակարարումը <<ՀՀԳ>> ԲԲԸ-ում անցել են ստենդային փորձարկումներ և 16.11.2016թ-ի N 126, 26.12.2016թ-ի N 165 ստենդային փորձարկումների ակտերի հիման վրա արձանագրվել, որ դրանք համապատասխանում են այդ շարժիչների շահագործման համար անհրաժեշտ ցուցանիշներին, որոնք նյութական միջոցների ընդունման և 10.12.2016թ-ի ու 30.12.2016թ-ի հաստատված N71 և N79 ակտերով ՀՀ ՊՆ 84029 զորամաս մատակարարվելուց հետո, 11.01.2017թ-ին և 24.01.2017թ-ին, ելքի N 7 և N 1/49 ապրանքագրերով հատկացվել են ՀՀ ՊՆ 60925 զորամասին ու տեղադրվել վերոնշյալ Т-72-А տեսակի Х12АТ2336 գործարանային համարի N 916 տանկի և БМП-БРМ-1К տեսակի В06РТ6735 գործարանային համարի N940 մեքենայի վրա, սակայն տեղադրումներից հետո պարզվել են, որ դրանք նույնպես չեն համապատասխանում շահագործման համար անհրաժեշտ տվյալներին, որի պատճառով արգելվել է դրանց հետագա շահագործումը:

Նշված հանգամանքներում <<Զարենցավանի հաստոցաշինական գործարան>> ԲԲ ընկերության, ՀՀ ՊՆ 84029 և 60925 զորամասերի համապատասխան պաշտոնատար անձինք անփույթ վերաբերմունք են դրսևորել ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանք:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում 01.09.2017թ-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի և 376-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և կատարվել նախաքննություն:

29.12.2017թ-ին, գործով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը որոշում է կայացել թիվ 90152117 քրեական գործով նախաքննությունն իրականացնող քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին և 10.01.2018թ-ին նախաքննության հետագա կատարումը հանձնարարվել է նույն վարչության այլ քննիչի, իսկ 19.03.2018թ-ին հանձնարարվել է ինձ:

Թիվ 90152117 քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում պարզվել է, որ <<Սելեվերտա>> ՍՊ ընկերության տնօրեն Սամվել Սարգսի Սուքիասյանը, նախնական դիտավորությամբ, խաբեությամբ և վստահությունը չարաշահելու եղանակով ՀՀ պաշտպանության նախարարությունից հափշտակել է առանձնապես խոշոր չափերով՝ 13.523.440 ՀՀ դրամ գումար:

Այն է՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ 23.09.2016թ-ին կնքված ՈԲՔԱՀԱՊՁԲ-4-23 պայմանագրով Սամվել Սուքիասյանը պարտավորվել է մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրին և ցուցանիշներին համապատասխան տարբեր տիպի նոր և չօգտագործված, արտադրող գործարանի կողմից տրված տեխնիկական անձնագրով և արտադրող գործարանի տեխնիկական ցուցանիշների պայմաններին համապատասխան, ինչպես նաև գործարանային փաթեթավորմամբ շարժիչներ:

Մինչդեռ, 09.12.2016թ-ին մատակարարված շարժիչներից <<ՈՒՏԴ-20>> տիպի <<Ц07ИТ3295>> համարի շարժիչը, որը մատակարարել է 13.523.440 ՀՀ դրամով, չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրին՝ օգտագործված է և ունի մի շարք անսարքություններ, չունի արտադրող գործարանի կողմից տրված տեխնիկական անձնագիր և շարժիչի տեխնիկական ցուցանիշները արտադրող գործարանի տեխնիկական պայմաններին համապատասխանելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ կամ այլ հիմքեր, այդ թվում՝ գործարանային փաթեթավորում, ինչպես նաև շարժիչի ձեռքբերման կապակցությամբ որևէ փաստաթուղթ:

Դեպքի առթիվ, 10.12.2018թ-ին որոշում է կայացվել թիվ 90152117 քրեական գործի նյութերով նոր գործ հարուցելու, այն վարույթ ընդունելու և թիվ 90152117 քրեական գործին միացնելու մասին:

13.12.2018թ-ին, որոշում է կայացվել Սամվել Սարգսի Սուքիասյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նույն օրը նրան ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել և որպես խափանման միջոց կիրառվել՝ ստորագրություն չհեռանալու մասին:

Նախաքննությամբ պարզվել է, որ նշված պայմանագրով վաճառողը պարտավորվել է մատակարարել <<Վ-84>> և <<Վ-46-6>> տեսակի 17 հատ շարժիչներ, որոնց միավորի գինը սահմանվել է 35.000 ԱՄՆ դոլար, որը չի կարող գերազանցել 17.000.000 ՀՀ դրամը, <<БМП-БРМ-1К>> տեսակի զրահատեխնիկայի համար նախատեսված <<ՈՒՏԴ-20>>, <<ՈՒՏԴ-20-Ս1>> և <<ՄՆՈՒ-20>> տիպի 16 շարժիչներ, որոնց միավորի գինը սահմանվել է 28.000 ԱՄՆ դոլար, որը չի կարող գերազանցել 14.000.000 ՀՀ դրամը, այդ թվում՝ այլ տիպի 7 հատ շարժիչներ:

Պայմանագրով վաճառողի կողմից հանձնման ենթական ապրանքի ընդհանուր գինը կազմել է 1.215.000 ԱՄՆ դոլար, որը չի կարող գերազանցել 607.500.000 ՀՀ դրամը: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ապրանքի գրանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը / DDU ք.Երևան պայմանով, համաձայն INCOTERMS 2000 դրույթներին համապատասխան/:

Պայմանագրի 4.2 կետի համաձայն, գնորդն իրեն մատակարարած ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Նախաքննությամբ պարզվել է նաև, որ նշված պայմանագրով նախատեսված շարժիչները ամբողջությամբ մատակարարվել են, սակայն դրանք չունեն արտադրող գործարանի կողմից տրված տեխնիկական անձնագիր և շարժիչի տեխնիկական ցուցանիշները արտադրող գործարանի տեխնիկական պայմաններին համապատասխանելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ կամ այլ հիմքեր, այդ թվում՝ գործարանային փաթեթավորում, ինչպես նաև շարժիչի ձեռքբերման կապակցությամբ որևէ փաստաթուղթ:

Հայտնի չէ, թե նշված շարժիչները ում կողմից, երբ, ինչպես և ինչ պայմաններում են արտադրվել՝ նոր են, թե օգտագործված, նորոգված, կամ ինչ-որ գործարանի խոտան, կամ տարբեր շարժիչների դետալներով հավաքված:

Բացի այդ, դեռևս պարզ չէ, թե իրականում այդ շարժիչները ինչպես, ում կողմից և ինչ հանգամանքներում են մատակարարվել՝ նշված պայմանագիրը կնքելուց հետո են արտերկրից ներկրվել, թե դրանից առաջ, կամ ընդհանրապես ներկրվել են, թե ձեռք են բերվել ՀՀ-ում, ինչպես նաև, ինչ գնով և ինչ հանգամանքներում են ձեռքբերվել:

Համապատասխան քննչական գործողությունների արդյունքում պարզվել է նաև, որ ՀՀ մաքսային և հարկային մարմիններում նշված շարժիչները արտերկրից ՀՀ ներկրելու և ընդհանրապես, շարժիչների վերաբերյալ որևէ տվյալ չկա, այդ թվում՝ պարզվել է, որ դրանք չեն մաքսազերծվել և պայմանագրով որևէ հարկային պարտավորություն չի կատարվել:

Մեղադրյալ Սամվել Սուքիասյանը օգտվելով մեղադյալի իր իրավունքներից հրաժարվել է ցուցմունք տալուց, իսկ որպես վկա հարցաքննությունների ժամանակ իր ցուցմունքներում շարժիչների ձեռքբերման, միավորի գնի, տեղափոխման, ծախսերի, վճարումների, մատակարարման և շարժիչների հետ կապված այլ հանգամանքների կապակցությամբ հիմնավոր փաստարկներ չի ներկայացրել:

Նախաքննությամբ պարզվել է նաև, որ <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունը նշված պայմանագրով, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության հետ 2007-2016թթ. ընկած ժամանակահատվածում կնքված՝ 16.04.2007թ-ին, ՆՄԱՊՁԲ-7-108, 23.06.2007թ-ին, ՆՄԱՊՁԲ-7-110, 04.03.2008թ-ին, ՆՆԱՊՁԲ-7/77-1, 27.06.2008թ-ին, ՆՄԱՊՁԲ-7-135, 24.02.2009թ-ին, ՆՆԱՊՁԲ-7/100-1Պ, 03.03.2010թ-ին, ՆՆԱՊՁԲ-7/8-2Պ, 18.02.2011թ-ին, ՊՊԱՊՁԲ-7/6-2, 28.07.2011թ-ին, ՊՊԱՊՁԲ-7/6-4, 07.02.2012թ-ին ՍԲԱՊՁԲ-7/23-1, 14.01.2013թ-ին, ՇՀԱՊՁԲ-7/5-2, 05.09.2016թ-ին, ՆԲԸԱՀԱՊՁԲ-4-22, 24.11.2016թ-ին, ՆԲԸԱՀԱՊՁԲ-4-27 պայմանագրերով, արտերկրից ՀՀ ներկրված ապրանքատեսակների համար մաքսազերծումներ չի կատարել, այդ թվում՝ պայմանագրերով նախատեսված որևէ հարկային պարտավորություն, ՀՀ հարկային մարմիններում և ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում որպես ՀՀ-ում գործող ոչ ռեզիդենտ կազմակերպություն գրանցված չէ և նշված պայմանագրերով նույնպես պարզ չէ, թե մատակարարված ապրանքները ինչ գնով, որտեղից և ինչպես են ձեռքբերվել:

Այն դեպքերում, երբ նշված պայմանագրերով արտերկրից ներկրվող ապրանքների մաքսազերծումը նախատեսվել է <<Սելեվերտա>> ՍՊ ընկերության կողմից, Ս.Սուքիասյանը համապատասխան մարմնին հայտնել է, որ ՀՀ-ում չունի ներկայացուցչություն և խնդրել է, որ մաքսազերծումը կատարվի իրեն վճարվելիք միջոցների հաշվին, որոնք մի շարք պայմանագրերով չեն համապատասխանում տվյալ պայմանագրերով նախատեսված վճարման ենթակա գումարների չափին և պարզ չէ, թե իրականում, որքան գումար է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերջինիս ներկայացված բանկային հաշիվներին փոխանցվել:

Պարզվել է նաև, որ մեղադրյալ Սամվել Սուքիասյանը ՀՀ քաղաքացի է, մշտապես բնակվում է Հայաստանում և հանդիսանում է <<Ստանդարտ ՕՅԼ>> և <<Կապիտալ Ինվեստ>> ՍՊ ընկերությունների տնօրենը, որոնք ՀՀ-ում գրանցված ռեզիդենտ կազմակերպություններ են:

Թվարկված մի շարք պայմանագրերում, <<Սելեվերտա>> ՍՊ ընկերության իրավաբանական հասցեն նշված է՝ ԱՄՆ Արկանզաս նահանգ, ք.Լիթըլ Ռոք, 323 Սենթեր փողոց, Թաուր շենք, բն. 1202, ՀայբիզնեսԲանկ ՓԲԸ Հ/Հ 1150000401840100, իսկ մյուսներում՝ Մեծ Բրիտանիա /Միացյալ Թագավորություն/ W17 բաժին, ՄԿ երկրորդ Բիզնես Կենտրոն Բարթոն փողոց, Ռիերթը Իթն, Բլեթչլի, Միլթոն Քեյնս, ՄԿ 3HU, ընկերության գրանցման համար OC 371225, Արմբիզնեսբանկ ՓԲԸ, SWIFT: ARMNAM 22, Հ/Հ 1150012834030101:

Նշված շարժիչների և մյուս պայմանագրերով նախատեսված հարկային պարտավորությունների կատարման և դրանց հետ կապված այլ հանգամանքների կապակցությամբ Ս.Սուքիասյանը իր նշված ցուցմունքներում հայտնել է, որ <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունը ՀՀ-ում հանդիսանում է ոչ ռեզիդենտ կազմակերպություն՝ ՀՀ-ում հարկ վճարող չէ, դրա համար էլ շարժիչների մատակարարման, ինչպես նաև մյուս պայմանագրերով ընկերությունը հարկեր, տուրքեր և այլ վճարումներ չի կատարել: ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարված ապրանքների դիմաց վճարումը կատարվել է բանկային փոխանցման միջոցով՝ <<Սելեվերտա>> ՍՊ ընկերության ՀՀ-ում գրանցված բանկային հաշվին:

Հայտնել է նաև, որ <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունը գրանցված է՝ Մեծ Բրիտանիա /Միացյալ Թագավորություն/ W17 բաժին, ՄԿ երկրորդ Բզնես Կենտրոն Բարթոն փողոց, ՈՒերթը Իթն, Բլեթչլի, Միլթոն Քեյնես, ՄԿ 3HU, ընկերության գրանցման համար OC 371225, և որ ինքը հանդիսանում է ընկերության լիազորված անձը Հայաստանում, բնակվում է Երևան քաղաքում, և իրեն տրվել են լիազորագրեր ու կնիքներ, որով Հայաստանում կնքել է գործարքներ:

Ընկերության կողմից իրեն տրված լիազորագրերը, կանոնադրությունը և կնիքները իրեն ուղարկվել է Լիտվայում գործող ընկերության կողմից, որի անվանումը չի հիշում, այն միջնորդ կազմակերպություն է հանդիսացել, որը զբաղվել է տարբեր արտասահմանյան կազմակերպությունների համար ներկայացուցիչներ ստեղծելու գործունեությամբ:

ՀՀ-ում կատարված գործարքների կապակցությամբ այդ միջնորդ կազմակերպությանը հիմնականում վճարել է հաստատագրված տարեկան վճար, որի չափերը տարբեր տարիների համար տարբեր է եղել, հաշվետվությունները կազմվել են միջնորդ կազմակերպության կողմից և նրանց միջոցով ներկայացրվել <<Սելեվերտա>> ՍՊ ընկերության վերադաս մարմիններին:

Հայտնել է նաև, որ չի հիշում, թե բացի ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքված պայմանագրերից ՀՀ-ում գործող կազմակերպություններին ապրանքներ մատակարարել է, թե ոչ:

Բացի այդ, Ս.Սուքիասյանը նշել է, որ <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունը, որը գրանցված է Մեծ Բրիտանիայում, գործունեությունը սկսել է 2012թ-ից, իսկ <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունը, որը գրանցված է եղել ԱՄՆ Արկանզաս նահանգում, գործել է մինչև 2010թ-ը, և վերջինիս բաժնետերերը եղել են այլ կազմակերպություններ, այնտեղ գործել է մինչև Արկանզաս նահանգում օրենքների փոփոխությունը, և որ այն ուրիշ կազմակերպություն է եղել, ունեցել է այլ կանոնադրություն և այլ կնիքներ:

ԱՄՆ-ում գրանցված <<Սելեվերտա>> ՍՊ ընկերության անունից գործելու լիազորագրերը, կնիքները և արտոնությունները իրեն տրամադրվել է Լատվիայում գործող միջնորդ կազմակերպության կողմից, որը իրականացրել է կապը կազմակերպության գլխամասի հետ և այդ միջնորդ կազմակերպությունն է իր հաշվետվությունները ընկերությանը ներկայացրել:

ՀՀ պաշտպանության նախարարության և <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունների միջև կնքված պայմանագրերում Սամվել Սուքիասյանը ներկայացել է որպես ընկերությունների տնօրեն, մինչդեռ նրա կողմից նախաքննության ընթացքում ներկայացված, ինչպես նաև գործում առկա մյուս փաստական տվյալների համաձայն, վերջինս <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունների տնօրենը չի հանդիսացել, սակայն ՀՀ-ում փաստացի տնօրինել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված ընկերությունների բանկային հաշիվներին փոխանցված գումարները:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռքբերված փաստական տվյալները ստուգելու և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք այլ հանգամանքներ պարզելու, մասնավորաբար՝ նշված շարժիչների և մյուս պայմանագրերով մատակարարված ապրանքատեսակների ձեռքբերման աղբյուրները, միավորի գինը, տեղափոխման, մաքսազերծման, վճարների և մյուս ծախսերի, հարկային պարտավորությունների կատարման, նշված միջնորդ կազմակերպություններին փոխանցված գումարների չափը, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից նշված պայմանագրերով Սամվել Սուքիասյանի կողմից ներկայացված <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունների բանկային հաշիվներին փոխանցված գումարների չափը և մի շարք այլ հանգամանքներ պարզելու նպատակով, դատարանի թույլտվությամբ ՀՀ-ում գործող բանկերից և վարկային կազմակերպություններից առգրավվել են վերջինիս անվամբ և նրա կողմից ՀՀ-ում փաստացի տնօրինված <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունների 2007-2016թթ. ընկած ժամանակահատվածի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

Նախաքննության ընթացքում առգրավվել, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ուղարկվել են <<ԱրմԱէրո>> ՓԲ և <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունների հետ կնքված նշված պայմանագրերի վերաբերյալ փաստաթղթեր:

Քրեական գործի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ է պարզել գործի համար նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, մասնավորաբար՝ <<ԱրմԱէրո>> ՓԲ և <<Սելեվերտա>> ՍՊ ընկերությունների կողմից հաշվապահական հաշվառումը վարելու, նշված պայմանագրային պարտավորությունները կատարելու, ինչպես նաև այլ

հանգամանքներ, որոնց համար անհրաժեշտ են հաշվապահական բնագավառի մասնագիտական գիտելիքների տիրապետող, գործով չշահագրգռված անձի աջակցությունը:

Նկատի ունենալով, որ հաշվապահական բնագավառի բազմամյա աշխատանքային փորձ ունեցող Քնարիկ Ռուբենի Սարգսյանը գործով չշահագրգռված անձ է, կարող է հաշվապահության բնագավառի իր մասնագիտական հմտությունները և գիտելիքներն օգտագործելով աջակցել հաշվապահական ստուգմանը, ինչի կապակցությամբ ներկայացրել է անձը հաստատող փաստաթուղթ, մասնագիտությունը վկայող հավաստագիր, մասնագիտական ստաժը հաստատող աշխատանքային գրքույկ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի չորրորդ մասի 5-րդ և 12-րդ կետերով և 84 հոդվածով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Քնարիկ Ռուբենի Սարգսյանին (ծնված 29.08.1953թ., բնակվում է ք.Երևան, Նորք, 5-րդ փողոց տուն 7/1), նշանակել մասնագետ և ստանալ վերջինիս աջակցությունը թիվ 90152117 քրեական գործով մասնագիտական ստուգում կատարելու համար:

2. Որոշման մասին հայտնել Ք.Սարգսյանին և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածով նախատեսված մասնագետի իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ քննչական կոմիտեի ՔՔԳՎ ՀԿԳ
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության առաջին դասի խորհրդական **Ա.Բաբայան**

Սույն որոշումն ինձ հայտնված է 2019թ. Դեկտեմբեր 18-ին:

Միաժամանակ ինձ բացատրվել է, ՀՀ քր. դատ. օր-ի 84 հոդվածի համաձայն իմ իրավունքներն ու պարտականությունները.

ՄԱՍՆԱԳԵՏՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

✓ Քրեական վարույթն իրականացնող մարմնի կամ քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձի թույլտվությամբ ծանոթանալ գործի նյութերին նաև հարցեր տալ ներկաներին.

✓ Ներկաների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքների վրա, որոնք կապված են առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու, ինչպես նաև իր մասնագիտական իրավասության մեջ մտնող հարցերի բովանդակության հետ.

✓ Առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.

✓ Ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրությանը, ինչպես նաև համապատասխան մասով՝ դատական նիստի արձանագրությանը և իր մասնակցությամբ իրականացվող քննչական գործողության ընթացքի, բովանդակության և արդյունքների

գրառումների լրիվության և ճշտության հետ կապված դիտողություններ անել, որոնք մտցվում են արձանագրության մեջ.

✓ Ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում:

✓ Մասնագետն ունի նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

ՄԱՍՆԱԳԵՏԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

✓ Ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով անհրաժեշտ աջակցություն ցույց տալու համար.

✓ Քրեական վարույթն իրականացնող մարմնին և քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձին ներկայացնել իր հատուկ որակավորումը հաստատող փաստաթղթերը.

✓ Քրեական վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև կողմերի պահանջով դատական նիստի ժամանակ տեղեկություններ հայտնել իր մասնագիտական փորձի և համապատասխան քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հետ հարաբերությունների մասին.

✓ Աջակցություն ցույց տալու համար անհրաժեշտ ամբողջ ժամանակահատվածում գտնվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման վայրում, դատական նիստերի դահլիճում և չլքել նշված գործողության կատարման վայրն առանց այն կատարող անձի թույլտվության, իսկ դատական նիստերի դահլիճը՝ առանց նախագահողի թույլտվության.

✓ Օգտագործել իր մասնագիտական հմտություններն ու գիտելիքներն առարկաներ և փաստաթղթեր հայտնաբերելու, ամրապնդելու և վերցնելու, տեխնիկական միջոցներ կիրառելու, փորձագետին հարցեր առաջադրելու գործում քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարող անձին օգնություն ցույց տալու, ինչպես նաև նշված անձին, քրեական վարույթն իրականացնող մարմնին և դատարանի նիստին ներկա գտնվող կողմերին իր մասնագիտական իրավասության մեջ մտնող հարցեր պարզաբանելու համար, բացատրել իր գործողությունները.

✓ Ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին.

✓ Դատական նիստի ժամանակ պահպանել կարգուկանոն.

✓ Արձանագրությունում ստորագրությամբ հաստատել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ընթացքի, բովանդակության և արդյունքների գրառումների լրիվությունը և ճշտությունը:

✓ Առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության չհրապարակել իր մասնակցությամբ կատարված քննչական կամ այլ դատավարական գործողության ժամանակ, ինչպես նաև դռնփակ դատական նիստի ժամանակ իրեն հայտնի դարձած տեղեկությունները.

✓ Մասնագետի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն.

Մասնագետ_____**Ք.Ռ.Սարգսյան**

Որոշումը հայտնեց, իրավունքները պարզաբանեց՝

ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ ՀԿԳ
քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
արդարադատության առաջին դասի խորհրդական **Ա.Բաբայան**